Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի Ա Կ Ա Ն Ծ Ա Ռ Ա Յ Ո Ւ Թ Յ Ա Ն Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 մարտի 2014 թվականի N 260-Ա

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 35-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությանն կառավարության 2014 թվականի փետրվարի 6-ի N 105-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի մարտի 21-ի N 01/16/1301-14 և 2014 թվականի մարտի 26-ի N 01/16/1374-14 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 2-ի <<Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին>> N 35-Ա որոշմամբ հաստատված քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկի <<(67) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմ>> բաժնում (այսուհետ՝ Բաժին) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Բաժնի <<2.2>> ենթաբաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

<<50. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ>>.

2) Բաժնի <<3.1>> ենթաբաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

<<15. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի գլխավոր մասնագետ>>.

3) ուժը կորցրած ճանաչել Բաժնի <<3.3>> ենթաբաժնի 11-րդ, <<4.1>> ենթաբաժնի 38-րդ կետերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Մ. ԲԱԴԱԼՅԱՆ